

ՎԱԼԵՐԻ ՓԻԼՈՅԱՆ

ԵՂԵՌՆԸ ՆՐԱՆՏ ՄԱԹԵԻՈՍՅԱՆԻ ՄՏԱՍԵԷԹՈՒՄՆԵՐՈՒՄ

Կա մարդու հիշողություն, ազգի հիշողություն և մարդկության հիշողություն, որոնք ամբողջանում են հաջորդաբար: Սակայն հայոց ողբերգության հետ կապված՝ չի կայանում ամբողջությունը, որովհետև մեկ ազգի ողբերգությունը չի գիտակցվում մեկ այլ հավաքականության և ողջ մարդկության կողմից, չի ընդունվում մեր իմացած ճշմարտությունը: Ուրեմն և հարկ է Կեր լինել սեփական հիշողությանը և վերադարձնել մարդկության հիշողությունը: Նաև այս առաքելությունն ունի հայոց գիրը, որ մերային ցավից «կեռացել է»:

Երբ փորձում ենք Ի. դարասկզբի երկու փաստամյակների և այնուհետ դրսևորված մեր մշակույթի զարգացման ընթացքում բնական ժառանգորդություն Կեսնել, չենք կարողանում, որովհետև անբնականը՝ եղեմը, դրսևորվեց մեր ժողովրդի կյանքում և անխուսափելիորեն արժանացել է գրականության մեջ: Եղեմից համարյա դար է անցել, բայց այն շարունակական է իր հետևանքներով, բանգի այսօր էլ թերևս յուրաքանչյուր հայ ընթանիքի է վերաբերում Կազնապը՝ որպես կայացած փաստ կամ վաղվա գլխին կախված դամկլյան սուր. «Իսկ մե՛նք, կվճարենք իբրև վերջին փրկագին այն, որ պիտի գա: Իբրև վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ, որոնք մեզմե վերջ պիտի գային: Որովհետև այն, որ պիտի գա, պիտի ըլլա օտար, բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղա՛, մեղա՛ Արարաբին»¹:

Այս իրողությունը, ինչպես նաև Ի. դարի ողջ հայ գրականության պարմությունն է կամա թե ակամա մեզ վերադարձնում եղեմին, նրա գեղարվեստական մարմնավորումներին: Կարո՞ղ ենք Ի. դարի հայ գեթ մի գրողի հիշել, որ չի կարարել այդ անդրադարձը. Նովհաննես Թումանյան և Ավերիք Իսահակյան, Եղեշ Զարենց և Վահան Տերյան, Լևոն Շանթ և Դերենիկ Դեմիրճյան, Ակսել Բակունց և Գուրգեն Մահարի, Սյուսիան Զորյան և Նամասպեղ, Շահան Շահնուր և Կոստան Զարյան, Նաիրի Զարյան և Նամո Սահյան, Նովհաննես Շիրազ և Պարույր Սեակ... Իրավունք չունենք մոռանալու, որ գլխավորեց ու չկա հայ գրականության այն անկրկնելի որակը, որ «արեւմտահայ գրականություն» ենք կոչում՝ իր սուրբ նահապատկերով... Որպես նրա ժառանգորդ՝ ձեռավորվեց

1 Շ. Շահնուր, Երկեր երկու գրքով, գիրք առաջին, Երևան, 1982, էջ 110:

սփյուռքահայ գրականությունը, որի գնումների առարկան կարող ենք ձեռնկերպել առաջին հերթին որպես նախկին («կարտի գրականություն») և ներկա («նահանջի գրականություն») կորուստների գրականություն, որ **գուցե ունենա իր ավարտը**² միավորվելով մեկ միասնական ազգի ու գրականության մեջ կամ շարունակվի՝ դառնալով մեր ժողովրդի նաև մերօրյա երկարված վիճակի ու շարունակական կորուստների արտահայտություն, կամ **միգուցե ունենա իր ավարտը**³ կորցնելով սփյուռքահայության կենսունակությունը: Դիտարկումը թերևս ծայրահեղ է, ինչպես նաև եզրահանգումը: Սակայն սփյուռքում է նորից հեր նայել ու րեսնել եղեռնը: Այնինչ անդրադարձ կատարում ենք և երբեմն՝ ոչ ժամանակին: Օր ծերության Վահե-Քաջան գրեց «Մի դաշույն՝ այս պարսկերի մեջ», Ժանսենը եղեռն նկարեց, և աշխարհահռչակ Գրիգորի Պեկն օր ծերության՝ դերասանությունից հեղու, սկսեց սովորել իր նախնիների հայերենը... Ինչ է այս: Օր ծերության վերադա՞րձ արմարներին, թե՛ մի րեղ՝ մի րարածքում, մնալու ապահովագրություն, իմաստանալու առհավարչյա՞ր, թե՛ յուրովի ապաշխարանք: Նորից ու նորից (ինչպես միշտ) բախվում են անհավականն ու հասարակականը, ես-ն ու մենք-ը, իսկ եղեռնը և եղեռնի իմաստավորումը ես-ից և մենք-ից վեր են, ուրեմն՝ եթե ես-ը «րկար» է ու չի կարողանում խոսել Յավի դեմ ու Յավի մասին, ապա եղեռնի պարարդանքով պիտի խոսի: Այս րեսակերից կարեւոր է լինելու ոչ թե հումանիզմ-մարդասիրությունը՝ ամենասիրությունը, այլ ալրուրիզմը՝ այլասիրությունը, որ նույն մարդասիրությունն է՝ ես-ը բացառած: Եւ եթե եղեռն ենք մեջրեղում, իմ ես-ը նրանցից մեկն է ու չկա, ուրեմն՝ Չարենցի «Բոլորը քեզ»-ը և «Թող ոչ մի գոհ չպահանջվի ինձնից բացի»-ն ու Մեծարենցի «Տուր ինձի, րեր, ուրախությունն անանձնական»-ը, Ջահրարի «Լաց որ ես կույամ/ Ինձի համար չէ ուրիշին համար»-ը այդ ցանկալի այլասիրության արտահայտություն են: Եւ այդ այլասիրության կողքին սեփական ցավը և համարողկային ողբերգությունը՝ հայոց եղեռնը, իմաստավորելու-հասկանալու խնդիր ունենք:

Բայց չափազանց դժվար է եղեռնի իրողությանը անդրադարձ կատարելը ամեն մարդու և ընթերցողի համար: Այն դժվար է նաև ցանկացած հայ գրողի համար, երբ փորձում է գեղարվեստորեն վերամարմնավորել այն կամ խոսել եղեռնի մասին: «Եղեռնը դժոխք է, բազմագլուխ հրեշ, որ չի թողնում մոլերնալ, թունավոր բոցերով դեռ հեռվից է խելագարեցնում ու ոչնչացնում ամեն մի հայ մարդու, առավել ես՝ արվեստագետի»⁴: Եվ ծնվում են մրբեր, բանաձեռումներ, որ ժամանակի մեջ մնում են նախապետավածից ավելի, քանզի նրանցում եւ՝ ասելիքի ընդհանրացումներ կան, և՛ առաջիկա ճանապարհների ուղղորդումներ, և հասարակության միւրքն ու հուզումն է արձանագրվում: Այդպիսի խոսքերկխոսություն է Նր. Մաթեոսյանի «Լեզվի պոեզիան»՝ 1980-ի հարցազրույցը

2 Նր. Մաթեոսյան, Սպիտակ թղթի առջև, Երևան, 2004, էջ 284:

Այլա Մարգենկոյի հետ, ուր հայ գրողը, անդրադառնալով գրականության մեջ եղեռնի թեմայի գեղարվեստական մարմնավորումներին, մասնավորապես նշում է. «... մարդկության պարմության մեջ կան պահեր, իրավիճակներ, որոնց գեղարվեստական գրականությունը չպիտի առնչվի: Օրինակ, 1915-ի արյունալի ցեղասպանությունը... դա չափազանց ցավոք է: Ես ֆիզիկապես հիվանդանում եմ, երբ մտածում եմ այդ մասին, այդ ցավի մասին, եւ ես չեմ ուզում, ոչ, ես չեմ կարող այդ մասին, այդ ցավի մասին գեղարվեստական լեզվով պարմել, պարմելի մեջ խաղի, ձեռի փարթ մտցնել՝ մի խոսքով՝ արվեստ: Ոչ, նման սահմանազանց-անսահման ցավից գրականություն չի սրելով: Այդ հարցը հանճարեղ շարժանքեր է կլանել եւ ոչինչ չի փակել արվեստին»³:

Մեջբերված հարվածը ցավալիորեն ճշգրիտ է եւ, սակայն, անկապար: Ըճգրիտ է, երբ հեղինակը խոսում է «ցավի մասին գեղարվեստական լեզվով պարմելու», «սահմանազանց-անսահման ցավից գրականություն» սրելովն ու անհնարինության մասին, սակայն անկապար է թվում, երբ մտածում ենք, որ Նոմ փառող մեկ ու եզակի ճանապարհ չկա, այլ կան ճանապարհներ: Արդ եւ պարզ է դառնում, որ կարելի է գրել ոչ միայն «ցավի մասին», այլ նաեւ ցավի դեմ: Եթե հեղինակի հիշած պայմանականության մեջ ենթադրվում է «Յավ-Նեղինակ-Յավի գեղարվեստական մարմնավորում եւ Յավի հիշողություն», ապա երկրորդ դեպքում ենթադրվում է «Յավ-Նեղինակ-Յավի դեմ գեղարվեստական մարմնավորում-Յավի հաղթահարում» պայմանաձեռ:

Տարիների փորձն ու իմաստությունը, ինչպես նաեւ բազմիցս կրկնվող աղմկահարույց վերահարցումները Նր. Մաթևոսյանին ստիպեցին ճշգրտել եւ նորից բարձրաձայնել ասելիքը. «Ես փեր եմ իմ ժողովրդի անցյալին, այդ թվում նաեւ եղեռնին... Ինձ հայրնի է ընդամենը մի քանի կայացած, բարձրարվեստ գեղարվեստական սրելծագործություն 1915 թ. եղեռնի մասին: Դա Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրն» է, ամերիկահայ գրող Լեոն-Ջավեն Սյուրմեյանի «Ձեզ եմ դիմում, փիկնայք եւ պարոնայք» վեպը եւ Գուրգեն Մահարու «Այրվող այգեստանները»: Թերեւս դրանք են լավագույն գործերը: Ընդ որում, եթե Վերֆելն ու Սյուրմեյանը ինչ-որ իմաստով հայեցողներ էին, քանի որ եղեռնը նրանց համար նկարագրության օբյեկտ էր, ապա նույնը չի կարելի ասել Մահարու մասին: Նա կարծես ցույց փակել եղեռնը ներսից, քանի որ ինքն էլ եղեռնի սուբյեկտ էր»⁴:

Տարիներ անց ճշգրտվեցին նաեւ արձանագրված խոսքի որոշ իրողություններ. «... մենք ինքներս ժողովուրդն ենք եւ պետք է գրականության մեջ նույնպես ժողովուրդը լինենք: Լավագույն դեպքերում մեր գրականությունը մասին է լինում, մասինն այնինչ գրականություն չէ, մասին է»⁵:

3 Նր. Մաթևոսյան, Ես եւ եմ, Երևան, 2005, էջ 234:

4 Անդ, էջ 70:

5 Նր. Մաթևոսյան, Մայրական թղթի առջև, էջ 71:

Եղեռնը գեղարվեստական պարկերման առարկա դարձնելիս հայ գրողն ուղղակի չի կարող նրա նկարմամբ վերաբերություն դրսևորել, քանզի ինքն էլ կա այնպեղ: Եւ ցանկացած այլ գրող, ինչի մասին էլ խոսի, չի կարող գրել մասին, որովհետեւ դա լավագույն դեպքում կդառնա նկարագրություն, բայց ոչ պարկերում: Սա է պարճառը, որ Մաթեոսյանը Մահարու գիրը բնորոշում է «եղեռնը ներսից», բայց ոչ եղեռնի մասին:

Այս ամենից հետո ուզում ենք եւս մեկ իրողություն շեշտել. գրականությունը՝ գրականություն, պարմությունը՝ պարմություն, ցավը՝ ցավ, եւ սակայն, ի վերջո, ժամանակն է եկել, որ չապրենք միայն գրականությամբ, չենթարկվենք պարմության քրամաբանությանը, ցավի քակ չկեռանանք, այլ ապրենք ազգովին՝ համախմբված որոշակի գաղափարների ու իրողությունների շուրջ. իսկ ապրելու համար նախ հաղթել է պէտք: Նայոց պարմության նվազագույն կետը հասարակարկա եղեռնն է՝ մեր մեծագույն պարպությունը, որի հաղթահարումն էլ պարմության ու գրականության մերօրյա ազգային առաջին հաղթանակն է լինելու, ուրեմն եւ Պարույր Սեւակի հանճարեղությունը պիտի փնտրել նախ նրա «Եռաճայն պարարագ»-ում՝ որպէս «Ողբամ մեռելոց»-«Բեկանեմ շանթեր»-«Կոչեմ ապրողաց»: Ուրեմն եղեռնի մասին գրելը չի նշանակելու միայն «ողբամ մեռելոց», այլ նաեւ կոչեմ մեռելոց՝ կոչեմ ապրելու...

Իսկ ինչպե՞ն մօրենալ եղեռնին եւ պարկերել այն: Մի՞թե կարելի է պարպվածին նոր պարպություն (այս անգամ՝ հոգեբանական) պարպադրել կամ պարպության հիշարակությամբ հաղթողներ ու հաղթանակ ապահովել: Բարդ եւ նրբանկար խնդիր, որի լուծումը ոչ միշտ է հոգուր ազգային ինքնագիրակցության, քանի որ շար հաճախ ինքներս մեր հանդեպ անգութ ենք: Նորի՛ց սպանել արդեն սպանվածներին, վերստեղծել նրանց դժոխքի դանթեականը... Սա էր պարճառը, որ Շ. Շահնուրն իր հերթին ձեւակերպում էր. «Գեշ գրականություն մը եկած էր լորճել այնպիսի նյութ մը, որ կպահանջե առավելագույն զգասարպում»⁶:

Բայց կա եւ խնդրի ծայրաբեւեռը, որ է՝ անհնար է շրջանցել, ուրանալ մեր ազգային կեցությանը պարպադրված փասարը. «Դուք ինձ ներեցեք, որ դարձյալ եղեռնի ժամանակներն եմ ընկնում. աշխարհում եթե մի մարդ կա, որ չի ուզում այդ ժամանակներն ընկնել, չի ուզում իր ժողովրդի կործանման պարկերի առջեւ կանգնել՝ հայ գրողն է, բայց ամենամանկական, ամենաալարուիսարական, ամենաուրուպիական երագանքների մեջ անգամ՝ անհնար է այդ ժամանակները շրջանցել»⁷: Ուրեմն՝ մենք ազգովին պարպադրված ենք ընդմիշտ հիշելու մեր պարմության ամենասեւ ու ահագարիւր իրողությունը, եւ ազգի բարոյականությունն է պարպադրում, որ այս հիշողությունն ու ցավը, եթե չունեն իրենց մուրհակի մարումը, փոխանցվեն հաջորդ սերունդներին, ասել է՝ հիշել եւ հիշեցնել:

6 Շ. Շահնուր, Երկեր, գիրք երկրորդ, Երեւան, 1985, էջ 123:

7 Նր. Մաթեոսյան, Ես եւ եմ, էջ 378:

Նիշողությունը հասարակագրում է հայոց ոգին ու բարոյականությունը՝ որպես ավիշ ու կենսահեղուկ, առանց որոնց չկանք, որպես կենսակերպ ու կենսաարարածք, առանց որոնց նույնպես չկանք: Եւ եղեռնին ցանկացած ճշմարիտ անդրադարձ ենթադրում է այդ ոգին ու բարոյականությունը, կենսակերպը եւ Կորուսյալ Նայք երկիրը որպես Վերագրնելի Ոստան ու Կենսաարարածք, այլ ոչ թե խորշակահար դրախար փեսները:

Նիշել գոսպ:

Ապրել՝ գորանալով:

Ապրել՝ անգամ նահապակվածներին ապրեցնելով:

Ապրել՝ հաղթելու համար:

Նաղթել՝ ապրելով:

Կարելոքում ենք վերջին ձեռակերպումը, քանի որ «ցեղովի խոսում ու գործում ենք հանուն ցեղասպանության ճանաչման, ցեղի մեծուփոքրով ծնկի ենք եկել մեր անթաղ մեռելների վրա եւ չենք փեսնում՝ որ հենց ցեղն ենք միսում - ցեղի կարողությունն ու կենդանի շունչը. արդարությամբ ու Աստծով խոկում եւ հափուցումն ու պահանջափրությունն ենք խոսում եւ չենք փեսնում՝ որ սպառվում է ինքը պահանջափրը»⁸:

Ահա եւ ընդհանրապես հայի հերեղեռնյան կյանքի առաջին փարիների փրամաբանությամբ, մեզ պարտադրվածի անհրաժեշտությամբ մոփեսնում ենք «կարոքի գրականություն» իրողությանը: Իսկ այսփրեղ եթե ամեն ինչ կարգին չէ, ապա ելակերն է արդարորեն մարդկային ու ճշմարիտ:

Ասում ենք «կարոքի գրականություն» եւ այդ գրականության ներկայացուցիչներ, փորձում ենք իմաստավորել նրանց գործը եւ երբեմն փեսնում ենք գեղարվեստի փայլափակումներ ու անկորնչելի արժեքներ, որ ծնվել են մեծ Զուլումից ու Ցավից հեփո՝ Ոգու մոլեգին ահագնությամբ, երբեմն էլ փորձում ենք առկա կաղապարներով ու մրացածին չափորոշիչներով անկափարություն ու թերացում փեսնել: Նարկավ, սկզբունք է, սակայն ա՛յս գրականության հանդեպ մեր վերաբերմունքի մեջ նախ եւ առաջ ժողովրդի պարմական հիշողությունն է կարելորվում, ինչպես մայրենին, առասպելը, արյան գենն ու ժառանգորդությունը:

Գուրգեն Մահարու վերաբերմամբ նորից Նր. Մաթեոսյանը խոսք է խոսել գրողին ու գիտնականին՝ գրագերփին վայել իմաստուն պարզությամբ, եւ այդ խոսքը կարող ենք ուղղորդել «կարոքի գրականության» **ցանկացած** ներկայացուցիչ ու նրա կերպած կենսաարարածքին՝ լինի Նամասփրեղի Փերճենչ, Մեծուրու Արմարան, Թորոփենցի Խարբերդ, թե ... ու նաեւ Մահարու Վան: Բայց Մաթեոսյանի խոսքը լսենք. «Բանասփրեղծության աստվածը, երբ ջախջախվում էին մեր երագները, այն հեռավոր փարիներին Մահարուն շշջացել էր մի մեծ գաղփրնիք՝

8 Անդ, էջ 130:

պետք է գրականությամբ եր խլել այն, ինչ պահել չենք կարենում ռազմիկների գնդերով: Երբեմն «պարտիզանական կռիվներով», երբեմն՝ կեղծ նահանջներով եւ վերջապես փայլուն մի ճակատամարտով նա անհայտությունից խլեց ու իր հայրենիքին վերադարձրեց իր Վանը, եւ մեծ գրող ու այսպիսով մեծ հայրենասեր Մահարու այդ Վանն արդեն անկորնչելի է: **Դա ոչ միայն այլեւս անկողոպտելի մասն է հայ գրականության, այլ նաեւ հայ ապագա իրականության: Դա թոփշային հրապարակ է դեպի իրական Վան:** Դա Արեւմտյան Հայաստանի մեծ խավարից Մահարու լույսով բացված այն հովիտն է, որ դեպի իրեն կգրավի խարխափող սերունդներ ու սերունդներ: <...> նա վերցրել ու դժվար ճանապարհներով մեզ է հասցրել մի պարկ հող՝ փռելու համար համակերպվող արշակներին ուրբերի փակ»⁹:

Եւ ոգու քարտեզին վերահայրնված բնակավայրը՝ մի պարկ կամ բուռ հողով հասարակագրված: Եւ գանգ ու ոսկորից գրականության արարմամբ վերամարդացած Մարգար, Նարո, Միջո, Կարապետ, Ադրինե, Մանաս, Մահմեդի Արուքին, Մակար վարժապետ, Տեր Թաթիկ... Երկու միլիոն ժողովուրդն այլեւս «կարտրի գրականություն» չէ, այլ պարմական ներկա, շրթայի կտրված օղակ, որ, սակայն, այս գրականությունը սրելոծողների գործությամբ դեռ կարողանում է մեզ կապել մեր պարմության հետ: Մոռանալ նրանց՝ կնշանակի ձեռքերը լվանալ ու հրաժարվել հողից ու հիշողությունից, հիշել միայն նրանց մահը, բայց ոչ նրանց ծնունդն ու ապրած կյանքը, կնշանակի անկապար վերաբեկնել նրանց: Այդ դեպքում չեն կարող լինել կայացած գեղարվեստ ու գրականություն: Պարկերել եղեռնից առաջ եղած գյուղն ու մարդուն, հողն ու սովորությունը, երգն ու մշակությունը՝ հայրենիքը՝ նշանակում է հասարակել, որ այդ Հայրենիքը եղել է ու կա: Եւ ոչ միայն հայալեզու, այլեւ ընդհանրապես ընթերցողին է մնում հարցը՝ «Իսկ ինչո՞ւ այսօր չկա», եւ դրա պարասխանը գտնելը: Ուրեմն եւ «կարտրի գրականություն» կոչված իրողությունը, անմիջականորեն չլինելով եղեռնի մասին կամ վերաբերմամբ (զի ընդգրկման սահմանը մինչեւ եղեռնն է), միաժամանակ եղեռնի դեմ է:

Եւ հիշենք նաեւ, որ այսօր եղեռնը շարունակական է իր հետեւանքներով: Այս հետեւանքների շարքում փորձենք փնտնել նաեւ արտագաղթը, քանի որ ըստ էության մեր «փոքրացված» հայրենիքը չունի բոլորիս մեկտեղելու հնարավորություն ու կարողություն. «Նրանք բոլորն իմն են. այն աղջնակը՝ որ Վահան Տերյանից բերանացի բանաստեղծություն է փանում իր հետ, փարը՝ որ գաղթի ճամփաներին է սկսել իր կյանքը եւ ճամփաներին էլ պիտի ավարտի, բոլորը՝ ովքեր փրանաարվանքյան երթուղում են ու Թուրքիայում, ովքեր Ֆրանսախոս են եւ ռուսախոս, Իրաքի ռազմաճակատում են եւ Իրանի ռազմաճակատում, բոլորը իմն են: Հայոց մեր աստղը պայթել ու բոլոր կողմերի վրա ցրվել է գալիս, եւ

9 Հր. Մաթևոսյան, Մալիպակ թղթի առջև, էջ 121: Ընդգծումը՝ Վ. Փ.:

այդ հեռացող կրակե բեկորները քանի դեռ փեսավում են՝ իմն են: Նրանք իմ ուժն ու կյանքն են հեռացնում: Այդպես, եթե հնարավոր է, խաչված մարմինը կնայեր վերացող հոգու երևից»¹⁰:

Մեկ էլ դառնանք Նր. Մաթևոսյանին: Պարասխանելով հարցին, թե՝ «...եղեռնի թեման համառորեն չէիք ուզում գրականության մեջ փեսանել: Չէի՞ք ուզում ազգը իր ցավին ու պարտությանը մոտեցնել... Ննարավոր է, արդյոք, ցավով ու պարտությամբ մարմնաշող ազգ դաստիարակել», նա ասել է. «Փորձեմ մեկընդմիջ սրուգաբանել: Գուցե ես վախկոտաբար, այդ հարցին պարասխանելիս, իրերն իրենց անուններով չկոչեցի: Ըստ երևույթին, ինձ խրպնեցրին էն բազում էջերը, որ եղեռնի մասին էին, բայց եղեռնի մասին չէին: Եղեռնը դարձել էր սպեկուլյացիայի թեմա, ապիկարների դաշտ: Մեծ թեմաները մեծ գրիչների կարիք ունեն: Մեծ գրիչներն իրավունք ունեն դիպչել ժողովրդի ցավին, մրնել մարդկային հոգեբանության գեհեներ, մակերթյան անկման և համկերյան վերընթացի գագաթները, ամբողջը իրավունք ունեն ընդգրկելու: <...> Եղեռնի մասին ճշմարիտ գրողների գրվածքների հետ հարաբերվելիս, պետք է ներկա լինես ծննդի: Էդ ողբերգական նյութը վերաճելու է մի այլ ծննդի: Շատ դեպքերում կրկնակի մահ էր դա: Եւ իմ վեճը դրա դեմ է եղել, կրկնակի մահվան դեմ է եղել»¹¹:

Ահա եւ եղեռնի թեմայով գրված ճշմարիտ գործերը դրսևորում են հայոց մշակույթի ու բարոյականության այն յուրահատկությունները, որոնք «հնարավորություն են տվել արտահայտելու իր «հայ ժողովրդի» սրբազան իդեալները, անմահանալու համառ ձգտումը, ամենադաժան պայմաններում անգամ մաքուր եւ ազնիվ մնալու իր ապշեցուցիչ կարողությունը»¹²: Ռոբերտ Փեն Ուոլենի միտքը՝ «Դու պիտի բարիք արարես չարիքից, քանզի ուրիշ ոչ մի այլ բանից չես կարող այն արարել», հարմար է գալիս նաեւ այս դեպքում, քանի որ ցավից ու անցած, բայց չափացած ողբերգությունից հայ գրողն իր բարոյական առաքելությամբ հասարակել եւ հասարակելու է հայ ազգի՝ «ամենադաժան պայմաններում անգամ մաքուր եւ ազնիվ մնալու իր ապշեցուցիչ կարողությունը» (Մ. Սարյան), քանի որ ցանկացած երկով մենք ոչ թե հաղթում ենք Չարին, այլ հաղթահարում ենք Չարը, ոչ թե ընդամենը եղեռնն ենք փաստում, այլ անգամ եղեռնի միջոցով հասարակագրում ենք հայոց էության ամենաեական կողմերը: Չէ՞ որ, Թ. Թորամանյանի ճշմարիտ դիտարկմամբ, «Ուրիշ ազգերի արվեստների գեղեցկությունը հուզիչ է, հաճախ գրգռող եւ խռովիչ, իսկ մեր արվեստի գեղեցկությունը անողորմող է, հանգստացնող, հայեցողության փառող»¹³: Այնպիսի մի բարդագույն թեմայի, ինչպիսին եղեռնն է, գեղարվեստական մարմնավորման ընթացքում «կարոտի գրականության» իրավ մեծերը, դարապարտելով

10 Նր. Մաթևոսյան, Ես եւ եմ, էջ 382:

11 Անդ, էջ 453:

12 Մ. Սարյան, Արվեստի մասին, Երևան, 1986, էջ 192:

13 Տե՛ս Ն. Պապուխյան, Թորոս Թորամանյան. կյանքը եւ գործը, Երևան, 2005, էջ 94:

այն, միաժամանակ սրելով նաև արվեստի անդորրող որակ՝ հասարակելով հայոց մշակույթի ու գրականության բարոյական, գեներիկ ու միֆական ընդհանրությունը, որովհետև «մերը ապաքինումի, խրախույսի, մխիթարության, հույսի ու հավաստի առաքելական գիր է եղել»¹⁴:

Խավարից լույս բամելով, մահվան հովիտներում կյանքը հասարակելով, չարին հակառակ բարին ամրագրելով՝ «կարոտի գրականության» մերոնք սրելով են գրի յուրահատուկ, անկրկնելի որակ, որ ոչ թե «դրախտ կորուսյալ»-ի ավստս է, այլ «դժոխք պարսպադրված»-ի դարապարտում:

Նրանք՝ այդ գրողները, սիգիփոսներ են, որ խաբս են փվել մահվան չաստվածներին ու կյանք վերադարձրել մարդկանց:

Չեն դարարկվել Հաղեսի թագավորության հովիտները, բայց գրանյութ աշխարհի Կորուսյալ Հայք երկրում կողք կողքի են կանգնել մարդիկ՝ այլևս չհեռանալու, հավերժորեն մնալու պայմանով:

Չի դարարկվել նաև քրիստոնեական դրախտը, բայց գրագեյների արարած աշխարհում ավելացել է բարությունը՝ դեմ հանդիման կանգնած չարին: «Կարոտի գրականության» մեծերը գրել են կյանքի համար՝ հասարակագրելով այն ու եղծելով եղեռնը, եւ նրանց սրելով ծածր եղեռնի մասին չէ, այլ եղեռնի դեմ:

Հայոց երկնամերձ մշակույթի մեջ այլ կերպ լինել չէր կարող, որովհետև հագարիինգհարյուրամյա հեռվից «Պիպոյից գրքի» իմաստնագույն թարգման-մեկնիչ Մովսես Խորենացին է հասարակագրում այս մշակույթի յուրահատկությունը. «...ամենայն արուեստիս զօրութիւն եղծմամբք եւ սրելծմամբք դարեւալ լինի»:

РЕЗЮМЕ

Между двумя десятилетиями начала XX века и процессом дальнейшего развития нашей культуры нет естественной преемственности, так как геноцид, осуществленный над нашим народом, неизбежно отразился и в литературе. Однако обращение к теме геноцида является очень трудным для любого армянского писателя, особенно, когда он пытается художественно переосмыслить эту трагедию или рассказать о ней. Если армянский писатель избирает геноцид в качестве предмета художественного изображения, то он просто не может представить собственное отношение к событиям, так как сам незримо присутствует там. Любой другой писатель, о чем бы он не задумывался, не может писать об этом, потому что в лучшем случае получится описание, а не изображение.

Мы всей нацией обязаны всегда помнить о самой мрачной странице нашей

¹⁴ Հր. Մաթևոսյան, Եւ եւ եւ, էջ 150:

истории, но надо помнить сдержанно, жить, набираясь мощи, пережить, давая новую жизнь погибшим мученикам. По Г. Матевосяну, литература, непосредственно не относящаяся к геноциду, одновременно выступает против геноцида и, «соприкасаясь с творениями правдивых писателей, повествующих о геноциде, надо всегда быть свидетелем рождения».

С болью от незарубцевавшейся трагедии армянский писатель своей нравственной позицией утверждает жизнь и будет всегда ее утверждать, отрицая геноцид, и продолжит писать против геноцида, а не о нем.

SUMMARY

There has been no natural succession during our culture development since the first two decades of the 20-th century for the Genocide was manifested in the Armenians' life and inevitably deduced in literature as well. It's too hard for an Armenian writer to apply to the theme of the Genocide while making an attempt to reembody it artistically or speaking about the Genocide. While making the Genocide a subject of artistic depiction the Armenian writer simply can't manifest an attitude to it for he may find himself in it. Any Armenian writer whatever he speaks about, the discussed matter always becomes a description at best rather than depiction. We are all obliged to remember the very sorrowful fact of our history forever but required to remember it restrainedly, live becoming strong and live even making the martyred live. According to Matevossyan the so-called literature-fact not being directly about the Genocide, is at the same time against it which is continuous in its consequences and "dealing with true authors' writings on the Genocide one should see".

Because of grief and non-cicatrized tragedy the Armenian writer with his moral mission has asserted and will assert life refuting the Genocide, always writing against the Genocide and never about it.